

սինքն՝ մեր երգերն ու եղանակները իրենցմէ առնուած ներկայացնելով: Եպիսկոպոսը ունէր խղճամիտ հաւաքումներ, ոսկեզօծ տետրակներու մէջ իր թիփիկ գիրովը օրինակած: Իր հաճոյքներէն մէկն էր ամէն կարեւոր այցելուի ցոյց տալ այդ թանկագին ու փառակազմ հատորը ու սպասել գնահատման:

Մաթիկը, արեւմտահայ գրականութեան հանդէպ իր ծանօթ արհամարհանքը անշուշտ պիտի տարածէր նաեւ այդ երգերուն ու մնար լուռ: Սրբազանը վերցուց գիրքը ու դարձուց կոնակը, յանձնարարելով ժամկոչին նարկիլէ մը եւ սուրճ մը: Բաժնուեցան իրարմէ՝ դժգոհ:

Առաջինը՝ անոր մէջ տեսնել կարծելով նոր ոգիի նմոյշ մը, որ հինը, անոր ամէն ինչը արժեք կեցուն մէջ կը շարունակէր իր նորութեան իրաւունքը ու պատճառ կը դառնար ազգին անծածկելի անկումին:

Երկրորդը՝ ա'լ անօգուտ կը կարծէր սա մարդերը, որոնք խունկ ու մաս հոտող իրենց մտայնութիւնը կը պարտադրէին երիտասարդութեան ու կը ջլատէին անոր ջանքերը իր ժամանակին հետ ըլլալու, քալելու: Անիկա չկրցաւ մոռնալ սակայն սրբազանին մէկ նախադասութիւնը, որով մեր վիճակը կը պատկերանար տպաւորիչ ճշդութեամբ: «Մենք թուրքին անապատին մէջ ովասիսներ ենք, բայց շատ ալ հեռու Եւրոպայէն»: Թուրքին ծո՛վը: Անշուշտ: Ո՞վ էր շարժած իր տեղէն, մեր երեք հարիւր հազար զոհերուն խղճալով: Ո՞չ ոք: Ու ահա թուրքը՝ աւելի քան վայրագ մեր գլխո՛ւն:

Ընկեր Մաթիկը եղաւ զգոյշ հաճի Մարութէին ալ տունը: Բայց կենդանի նահատա՛կը, որ Սեդրակն էր: Անոր լուսթիւնը ողջ գեղեցկութիւն մըն էր այդ օր մը շէն տունին մէջ: Անոր հայրը հանդիսաւոր ուխտ էր ըրեր, նոր քահանային ժամանումէն յետոյ, Արմաշու Զարխափանը տանելու իր տղան: Կրօնական զգացումը խորագոյն զգացական տարրն է ամէն թրքախօս հայէ ներս: Ս. Յարութիւն, Իջման տաճար, Ս. Կարապետ եւ ուրիշ ուխտավայրեր դարերով հրապուրած են կեսարացի մե-